

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՒՐՈՒԳՎԱՅՈՒՄ

Ուրուգվայը Հարավային Ամերիկայի ամենափոքր պետություններից մեկն է, որը գտնվում է Բրազիլիայի, Ատլանտյան օվկիանոսի և Արգենտինայի միջև: Երկիրը հայտնագործվեց 1516 թվականին հայտնի ճանապարհորդ Խուան Դիալ Սոլիսի կողմից, և ապա իսպանացի գաղութարարները նվաճեցին այն: Հետագայում եվրոպացի ներգաղթողները տեղի ջրարբի և արգավանդ դաշտավայրերը դարձրին ոչխար և արջառ արտադրող վայրեր:

Ուրուգվայն ունի 176.215 քառակուսի կիլոմետր տարածություն և շուրջ երեք միլիոն բնակչություն: Մայրաքաղաքը Մոնտեվիդեոն է: Ժողովուրդը պատկանում է Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուն: Բնակչությունը իսպանախոս է:

Մի քանի տասնամյակ շարունակվող սպատագրական պայքարներից հետո, 19-րդ դարի սկզբներին՝ 1814 թվականին, Ուրուգվայը ձեռք բերեց իր անկախությունը, որի շնորհիվ երկրում զարգացան գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը:

Ներկայումս Ուրուգվայում ապրում և գործում են շուրջ 15 հազար հայեր, որոնց մեծ մասը բնակություն է հաստատել մայրաքաղաքում:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՆՏԵՎԻԴԵՈ

Մոնտեվիդեոն, որը գտնվում է Ատլանտյան օվկիանոսի Լա Պլատա ծոցի ափին, վարչական կենտրոնն է համանուն նահանգի: Քաղաքը հիմանդրված է 1726 թվականին իսպանացիների կողմից, և այժմ ունի շուրջ մեկ միլիոն երեք հարյուր հազար բանկիչ: Մոնտեվիդեոն հայտնի է իր համալսարանով, որը հիմանդրված է 1849 թ. և գործում է առ այսօր:

Հայերը գաղթել են այստեղ համաշխարհային առաջին պատերազմից հետո՝ գալով Կիլիկիայից, Կեսարիայից, Յոզկաթից և այլ վայրերից: Մոնտեվիդեոյի հայ համայնքը ներկայումս ունի մեկ եկեղեցի, երկու դպրոց, մշակութային, բարեգործական, ուսանողական և հայրենասկցական միություններ, ինչպես նաև պարախումբ և նվագախումբ:

Ուրուգվայի հայությունը գրեթե ամբողջապես կենտրոնացված է այստեղ և կազմված է գլխավորաբար առևտրով և արհեստներով: Կան նաև որոշ թվով մտավորականներ և հասարակական գործիչներ:



Հուշարձան Մոնտեվիդեոյի «Արմենիա» հրապարակում նվիրված Հայաստանի վերածնունդին

Մայիսի 11-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսների, Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի, ինչպես նաև Բուենոս Այրեսի Հայ Առաքելական Եկեղեցու Կենտրոնական Վարչության մի քանի անդամների, Բուենոս Այրեսից մեկնում է Մոնտեվիդեո:

Կես ժամ տևող թռիչքից հետո Վեհափառ Հայրապետին փոխադրող օդանավը վայրէջք է կատարում Մոնտեվիդեոյի օդանավակայան, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Մոնտեվիդեոյի հայոց հոգևոր հովիվ Տ.

Հակոբ վրդ. Գլընճյանը, Մոնտեվիդեոյի եկեղեցական վարչության և Ընդունելության Հանձնախմբի անդամները, բազմաթիվ հայ հավատացյալներ, ինչպես նաև Մոնտեվիդեոյի պապական նվիրակը, դիվանագիտական մարմինների մի շարք ներկայացուցիչներ և քույր Եկեղեցիների հոգևոր հայրեր:

Նորին Սրբությունը, ըստ հայկական սրտառուչ ավանդության, օրհնում է ասպնջական Ուրուգվայի աղն ու հացը Իր հոգևոր զավակների խանդավառ արտահայտությունների ներքո, որոնք փութացել էին ողջունելու իրենց սիրեցյալ Հայրապետի ժամանումը:

Օդանավակայանի ընդունելության սրահում բարիգալստյան խոսքով հանդես է գալիս տեղի հոգևոր հովիվ Տ. Հակոբ վրդ. Գլընճյանը՝ հրավիրելով Նորին Սրբությանը տալու Իր օրհնության խոսքը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Անգամ մը ևս կուզեմ ձեզ ողջունել, սիրելի ժողովուրդ հայոց: Ս. Ջատիկը նոր տոնեցինք և տակավին Քրիստոսի Հարության շնորհներու ներքև կգտնըվինք: Ես կուգամ սուրբ Հարության ավետիսը Ձեզի բերել նաև Սուրբ Էջմիածնեն՝ Հայ Եկեղեցվո պատմական կեդրոնեն, որ հիմնված է 4-րդ դարու սկիզբներուն և որ մինչև այսօր կանգուն է ու իր հոգևոր առաքելությունը կկատարե մեր ժողովուրդի կյանքին մեջ թե՛ ի Հայաստան և թե՛ սփյուռքի տարածքի վրա:

Երրորդ անգամ կուգամ Մոնտեվիդեո, այս գեղեցիկ քաղաքը՝ բերելու իմ օրհնությունը մեր Եկեղեցվո զավակներուն և մոտիկեն ճանչնալու անոնց հոգևոր կյանքը: Իմ ցանկությունն է և մաղթանքը, որ աշխարհի վրա ապրող բոլոր հայերը, բոլոր երկիրներու մեջ, պահեն պահպանեն իրենց քրիստոնեական հավատքը, ապրին սուրբ Ավետարանի պատգամներով, հավատարիմ մնան մեր ավանդություններուն և մեր մայրենի լեզվին, զոր ես կնկատեմ սուրբգրական լեզու, որովհետև հայ լեզուն կազմավորվեցավ վերջնականապես Ս. Գրքի թարգմանությամբ 5-րդ դարու սկիզբին:

Այս առիթով ինձ համար հոգեկան մխիթարություն կնկատեմ իմ օրհնությունը բերել այս հյուրընկալ հայասեր երկրին՝ Ուրուգվային, որ, ինչպես Արգենտինան, առաջին համաշխարհային պատերազմեն հետո իր դռները բացավ հայ գաղթականներուն, որոնք փրկված էին 1915 թվականի ցեղասպանության դժոխքեն: Մենք երախտապարտ ենք Ուրուգվայի պետության և ժողովուրդին և վստահ ենք անշուշտ, որ մեր հավատացյալները այստեղ հավատարիմ կմնան այս հայրենիքին, իբրև շինարար, կարգապահ քաղաքացիներ: Աստված միշտ խաղաղ, բարգավաճ, ծաղկյալ պահե այս գեղեցիկ երկիրը:

Երջանիկ եմ նաև, որ այս առիթով կհանդիպիմ այստեղ, օդակայանին մեջ, ոչ միայն մեր հավատացյալներուն և մեր Եկեղեցվո ներկայացուցիչներուն, այլ նաև մեր քույր Եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչներուն՝ գլխավորությամբ Նորին Գերազանցություն պապական նվիրակին: Ես բարձր կգնահատեմ այս ուշադրությունը և եղբայրական վերաբերմունքը: Թող Աստված աճեցնե մեր քրիստոնեական եղբայրության ուրախությունը: Եվ միասին աղոթենք մեր Եկեղեցիներու, Քրիստոսի Եկեղեցու անսասանության և աշխարհի խաղաղության համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԴՈԿՏ. ԿԱՌԼՈՍ ՄԱՅԵՍՈՅԻ ՀԵՏ

Օդանավակայանից Նորին Սրբությունը Իր շքախմբով, ընկերակցությամբ Մոնտեվիդեոյի հայոց եկեղեցական վարչության անդամների և հոգևոր հովիվ Տ. Հակոբ վարդապետի, առաջնորդվում է Ուրուգվայի Արտաքին գործերի մինիստրություն, որտեղ հանդիպում է ունենում արտաքին գործերի մինիստր դոկտ. Կառլոս Մայեսոյի հետ:

Մեծարգո մինիստրը ողջույնի և բարիգալստյան խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին և Նորին Սրբությանը հռչակում երկրի պաշտոնական հյուր: Նորին Սրբությունը դոկտ. Մայեսոյին հայտնում է Իր շնորհակալությունները հարգալից ընդունելության համար՝ բարգավաճում սաղթելով նաև Ուրուգվայի պետությանն ու ժողովրդին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Այնուհետև Նորին Սրբությունը առաջնորդվում է Ս. Ներսես Շնորհալի եկեղեցի, որտեղ հավարավոր հայեր սպասում էին իրենց սիրելի Հայրապետին: Շքեղորեն զորգապատված, գույնզգույն ծաղիկներով կամարակապ զարդարված մուտքով և «Հրաշափառ»-ի երգակցությամբ Հայոց Հայրապետը մտնում է եկեղեցի: Ընդունելության ամենահուզիչ պահն այն էր, երբ բազմաթիվ աղավնիներ թռիչք առան եկեղեցու առջև՝ ի նշան խաղաղության և սիրո:

Գոհաբանական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը ասելիս է Իր առաջին օրհնությունն ու պատգամը ներկա հավատացյալ բազմությանը:

Աջահամբույրից հետո Վեհափառ Հայրապետը Իր շքախմբի անդամների հետ առաջնորդվում է քաղաքապետարանի կողմից տրամադրված ծովափնյա «Պարկե» հյուրանոցը, որտեղ երեկոյան ժամը 20-ին տեղի է ունենում առաջին ընթրիքը՝ ուրուգվահայ եկեղեցական վարչության, հոգևոր հովվի և Ընդունելության Հանձնախմբի անդամների ընկերակցությամբ: Ընթրիքի ընթացքում Ընդունելության Հանձանխմբի անունից ողջույնի և բարիգալստյան խոսքով հանդես է գալիս պրն. Թադեոս Պուտախյանը՝ նշելով.

«Վեհափառ Տեր,

Ընդունելության Հանձնախումբը ինձի պատիվ շնորհեց արտահայտելու մեր որդիական երախտագիտությունը և ողջունելու ազգիս Ընդհանրական Հայրապետ, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Կաթողիկոսը, որ այսօր Իր շքախումբով մեր մեջ կգտնվի Իր հավատացյալ զավակներուն տված այս երրորդ շնորհաբեր այցելությամբ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո պատմության մեջ առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Հայրապետ մը այսպես հաճախակի կայցելէ Իր աշխարհացրիվ զավակներուն՝ բաշխելով հավատք, սեր և օրհնություն Սուրբ Էջմիածնեն:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին արտասահմանի մեջ կմնա հայ ժողովուրդի հոգևոր և մշակութային կյանքի սրբազան խորհրդանիշը՝ տեսանելի և ընդունելի բոլորիս համար: Այս իսկ պատճառով, մեր Եկեղեցին, մեր հավատքի տաճարը ըլլալե բացի, կներկայացնե նաև մեր հայրենիքը սփյուռքի մեջ: Անկե է, որ կհաղորդվինք թե՛ հավատքով և թե՛ հայրենասիրությամբ:

Որքան երջանիկ կլգանք մենք վմեկ բոլորս, երբ այսօր մեր մեջ ունինք մեր շինարար Հայրապետը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով և Մկրտիչ Խրիմյան Հայրիկի գորովագութ սիրով: Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ի անունը արժանավորապես պիտի անցնի պատմության ի շարս հայ ժողովուրդի մեծագործ հայրապետներուն:



Մոնտեվիդեոյի հայոց Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին

Վստահ եմ, թե բոլորին զգացումները արտահայտած պիտի ըլլամ, երբ ըսեմ. «Բարով եկաք, Վեհափառ Տեր, հազար բարով»: Երկար կյանք և երջանիկ օրեր մեր սիրելի Ամենայն Հայոց Հայրապետին»:

Արտասանվում են բարիգալստյան և երախտագիտական այլ խոսքեր ևս, որոնց բոլորին պատասխանում է Վեհափառ Հայրապետը՝ ջերմ սիրով և հայրական քաղցրությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՑԵԼՈՒՄ Է ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՐԱՆՈՑԸ

Մայիսի 12-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Մոնտեվիդեոյի հայկական ծերանոցը և հանդիպում ունենում այնտեղ հանգստյան կոչված ծերունիների հետ:

Հանդիպմանը ներկա էին ծերանոցի Խնամակալ Մարմնի և Տիկնանց Միության անդամները: Հանուն Տիկնանց Միության խոսք է առնում տիկին Մարի Արեճյանը.

«Նորին Սուրբ Օծություն, Վեհափառ Տեր,

Ամեն հայու համար սրտագրավ, հանդիսավոր, միաժամանակ հուզիչ այս պահուն, որդիական սիրով կմոտենանք Ձերդ Սրբության՝ Ձեր բարձր

ուշադրությունը հրավիրելու ավելի քան 50 տարիներ առաջ հիմնված Հայուհուհիության բարեսիրական գործունեության վրա: Հայուհիացը եղավ կայաց միության կանանց առաջին կազմակերպությունը գաղութիս մեջ՝ հիմնված 1931-ին և ծնունդ առավ ուրուգվահայության պահանջներեն:

Ուրուգվահայ թեմի Կենտրոնական Վարչության անդամները տեղի հոգևոր հովվի հետ

Իր հիմնադրութենեն 40 տարի ետք, իր կարգին ան ծնունդ տվավ ընկերային անհրաժեշտության մը՝ հայ տարեցներու այս հանգստյան տան: Ինը տարիներե ի վեր մեկ հետ են իրենց ալևույթը ապրող մեր տարեց քույրերն ու եղբայրները, հայ հարկի մը ներքև, վայելելով անխտիր բոլորիս գուրգուրանք՝ ու սերը: Չենք ուզեր ըսել, որ հպարտ ենք կատարվածով, բայց և երջանիկ ենք մեր խոնարհ նվիրումով:

Տարագիր հայու վավակներ, հայ կինն ու մարդը ջանացած են գաղափարականն ու մարդկայինը նույնացնել՝ օգտակար ըլլալու համար մեր ազգային Եկեղեցիին, մեր վարժարաններուն, հայ մշակույթին, արվեստին ու բեմին: Ավելի քան 50 տարիներու Հայուհյացի տարեգրությունները հարուստ են այդպիսի ծառայության վկայություններով»:

Իր օրհնության խոսքով Վեհափառ Հայրապետը մխիթարում է ծերանոցի հայ ծերունիներին և հրաժեշտ առնում նրանցից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Հ. Բ. Ը. Միության Ուրուգվայի մասնաճյուղին և նախագահուհի Հ. Բ. Ը. Միության հիմնադիր Պողոս Նուպարի կիսանդրու բացման արարողությանը:

Այնուհետև, ընկերակցությամբ Մոնտեվիդեոյի քաղաքագլուխ դոկտ. Խուան Կառլոս Պաեսի, Վեհափառ Հայրապետը կատարում է տիկին Արփինե Գոր-

յումճյանի բարերարությամբ կառուցված մարկարանի, գրադարանի և լողավազանի բացումը:

ԸՆԹՐԻՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը մասնակցում է Ընդունելության Պատվո Հանձնախմբի անդամների կողմից Իր պատվին կազմակերպված ընթրիքին, որի ընթացքում բարի գալստյան խոսքով հանդես է գալիս Հանձնախմբի ատենապետ Արամ ավագ սրկ. Հոճաճանյանը:

Ընթրիքն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 13-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մոնտեվիդեոյի հայոց Ս. Ներսես Շնորհալի եկեղեցում սուրբ պատարագ է մատուցում Ամենայն Հայոց Հայրապետը:

Եկեղեցին լեփ-լեցուն էր հավարավոր հայ հավատացյալներով:

«Հայր մեր»-ից առաջ, հուզումնալից մթնոլորտի մեջ, Նորին Սրբությունը արտասանում է հետևյալ ոգեշունչ քարոզը՝ վերջում եկեղեցուն նվիրելով մի սրբագործված սկիհ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից»:

Այս խոսքերը Արևմուտքի եկեղեցական հայրերեն մին բանաձևած է 3-րդ դարուն՝ հաստատելու համար մեծ իրողություն մը, որ քրիստոնեական Եկեղեցվո ամբողջ պատմության ընթացքին ճշմարտված է կյանքի փորձով, թե մարտիրոսներու արյունը քրիստոնյաներու սերմը հանդիսացած է, այսինքն՝ ամեն անգամ, երբ առաջին երեք դարերուն հալածանքներ եղած են քրիստոնյաներու դեմ, և քրիստոնյաներ իրենց արյունը հեղած են, այդ ողբերգությունը դարձած է նոր սերմ քրիստոնեության տարածման և կարգացման ճամփուն վրա: Այդ ճշմարտված է մանավանդ 2-րդ և 3-րդ դարերու շրջանին, Հռոմեական կայսրության տարածքի վրա, ուր հալածանքները մերթ ընդ մերթ բավական սաստիկ եղած են, մանավանդ 3-րդ դարուն:

Հայաստանի մեջ նույն երևույթը կհաստատենք մանավանդ 3-րդ դարու վերջերուն, Տրդատ թագավորի շրջանին, երբ Հայաստանը քաղաքականորեն դաշնակից էր Հռոմեական կայսրության. բարեկամական հարաբերություններ կային, և Հայաստանի քաղաքականությունը քրիստոնյաներու նկատմամբ նույնն էր, ինչպես Հռոմի քաղաքականությունը: Այդ շրջանին է, որ մեր ժողովուրդն ալ բավմաթիվ մարտիրոսներ տվավ: Դուք լսած եք նաև Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերու նահատակության մասին: Սակայն նոր պայմաններու բերումով և նաև քաղաքական շահերու որոշ դասավորումով, Հայաստանի մեջ հաղթանակեց քրիստոնեությունը: Նույն Տրդատ թագավորը, որ հա-

լածոյն էր քրիստոնյաներու, Ս. Լուսավորչի ձեռքով քրիստոնյա մկրտվեցավ, և Հայաստանը դարձավ առաջին քրիստոնյա պետությունը: Հիմնվեցավ առաջին Հայաստանյայց Եկեղեցին՝ Ս. Էջմիածինը, և ահա այդ երանելի օրերեն մինչև այսօր մեր ժողովուրդը հավատարիմ մնաց Քրիստոսի Ավետարանին:

Սիրելի ժողովուրդ, ես այս շատ համառոտ պատմական ակնարկը կատարեցի, որովհետև այսօր մեր Եկեղեցին կոգեկոչե հիշատակը այդ դարաշրջանի քրիստոնյաներու դեմ եղած հալածանքներու: Ուրեմն, հայ ժողովուրդի պատմությամբ ես կհաստատվի Հարապետի դատողությունը, թե՝ «Աշխարհ մարտի-



Նորին Սրբությունը հաղորդություն է տալիս ուրուգվահայ հավատացյալներին

բոսաց սերմն քրիստոնէից»: Այդ ժամանակներեն մինչև այսօր, մեր ազգը բազում դժվարություններու կուրծք տալով, երբեմն նույնիսկ իր կյանքի գնով պաշտպանեց իր կրոնական հավատքը, իր խղճի ազատությունը, իր հայրենիքի ազատության հետ միասին: Մենք գրեթե չենք կրնար կատորոշել հայ քրիստոնյա հասկացությունը հայության գաղափարեն: Մեր Եկեղեցին ազգային Եկեղեցի է, և ամեն մեկ հայ կավակ այս Եկեղեցիին կավակն է: Հայաստանի մեջ, սիրելիներ, մեր պարզ ժողովուրդի հասկացողության մեջ մինչև հիմա ամուր դրոշմված է այս գիտակցությունը: Մկրտության ժամանակ, երբ հայ երեխան քրիստոնյա կմկրտվի, մեր գյուղացիները կըսեն՝ հայ մկրտվեցավ:

Ամբողջ աշխարհի մեջ փոխված են կյանքի պայմանները, ըմբռնումները, գիտությունը աճած և զարգացած է հրաշալի արդյունքներով: Մեր ժողովուրդի կյանքի պայմաններն ալ հիմնովին փոփոխված են ամեն տեսակետով և՛ Հայաստանի մեջ, և՛ սփյուռքի տարածքի վրա: Բայց այդ բոլորեն վեր կա մեծ հիմնական սրբություն մը, ճշմարտություն մը, որ կմնա անփոփոխ. այդ մեր քրիստոնեական հավատքն է, որովհետև թեև Քրիստոսի Ավետարանը գրի առնվեցավ, Քրիստոսի Հարութենեն հետո, սակայն այս Ավետարանը ուղղված է ոչ միայն 2-րդ կամ 3-րդ դարերու ազգություններուն, այլ համայն մարդկա-

թյան և բոլոր ժամանակներու համար: Քրիստոսի Ավետարանի ճշմարտությունները հավիտենական ճշմարտություններ են, որոնք կհագեցնեն մարդու հոգիին ծարավը: Քրիստոս ըսավ. «Ես կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք»: Քրիստոս այսօր ալ կենդանի է իր սուրբ Ավետարանով, և կենդանի են ու կենդանի պիտի մնան բոլոր անոնք, որոնք կդավանին սուրբ հավատքը և հավատարիմ կմնան աստվածային ճշմարտություններուն: Մեր ամբողջ պատմությունը, վերջին 1700 տարիներու ընթացքին, կվկայե նույն ճշմարտությունը: Բազում անգամներ մեր ազգը նահատակվեցավ, բայց իր հավատքով փրկվեցավ, պահպանեց իր ինքնությունը, իր մեծ իդեալները, իր մշակույթի լույսը:

Սիրելի ժողովուրդ, ես հեռավոր Հայաստանեն, Ս. Էջմիածնեն գալով և այս վկայությունը բերելով ձեզի այսօր, կուզեմ վկայել նաև, որ տարբեր պայմաններու մեջ այնտեղ ալ քրիստոնեական հավատքը կենդանի է, կվարգանա ու կաճի մեր ժողովուրդի հոգիին ու կյանքին մեջ: Սքանչելի փորձառություն մըն է, որ ունինք մենք այնտեղ, և բազում դրվագներ կրնայի պատմել ձեզի որպես արտահայտությունները այս իրողության: Մարդը ամեն տեղ, ամեն բանե վեր իրապես ծարավ է հոգևոր գերագույն ճշմարտություններու: Մենք կզգանք այդ ճշմարտությանց վորությունը այնտեղ մեր հայրենի երկրին մեջ: Եվ ես հիմա կուզեմ պատգամ ուղղել նաև ձեզի, որպեսզի դուք ևս մնաք հավատարիմ մեր նախնյաց սուրբ հավատքին, մեր քրիստոնեական լույս հավատքին, մեր Առաքելական Մայր Եկեղեցիին և Ավետարանի բարոյական սկզբունքներուն, պահեք պահպանեք ընտանեկան սրբությունը, եղբայրսիրությունը ձեր համայնքեն ներս, մեկդ մյուսի հանդեպ ըլլալով սիրալիր, մեկդ մյուսին օգնական և ներողամիտ, մեկդ մյուսին հանդեպ հարգալից ու գործակից և սուրբ պահեք հայ անունը այս հյուրընկալ երկրի մեջ, պայծառ պահեք ձեր Մայր Եկեղեցին, հետզհետե ավելի ամուր հիմքերու վրա դնեք ձեր եկեղեցական համայնքը և արժանի դառնաք Աստուծո օրհնության: Ուր որ ներքին համերաշխություն ու եղբայրական գործակցություն կա, այնտեղ կիջնե իսկապես Աստուծո օրհնությունը: Ես Ս. Էջմիածնի սուրբ խորաններուն առջև կաղոթեմ ձեր բոլորի քաջառողջության, արևշատության և ձեր առաքինի գործերու հաջողության համար: Մխիթարություն է ինձի համար երբեմն անձնապես այցելել ձեզի՝ բերելու ամենքիդ Ս. Էջմիածնի և մայր հայրենիքի ողջույնները: Դուք կապրիք հյուրընկալ երկրի մը մեջ, դուք կապրիք հայասեր ու հայապաշտպան երկրի մը մեջ, մնացեք հավատարիմ քաղաքացիները այս հայրենիքին՝ Ուրուգվային:

Իմ խոսքը ավարտելե առաջ կուզեմ իմ գոհունակությունը հայտնել և իմ գնահատանքը այս եկեղեցվո վարչական մարմիններուն, համայնքային բոլոր կազմակերպություններուն, որոնք շեն և պայծառ կպահեն այս աղոթքի Տունը: Իմ գնահատանքը և օրհնությունը նաև ձեզի բոլորիդ, սիրելի հավատացյալներ, որ նույն ոգիով կապրիք այստեղ, միշտ ձեր հոգատարության տակ պահելով ձեր աղոթքի Տունը, ձեր դպրոցները և մյուս հաստատությունները: Իմ գնահատանքի խոսքը կուզեմ ուղղել նաև ձեր հոգևոր հովվին՝ հոգեշնորհ Տ. Հակոբ վարդապետին, որ արդեն քանի մը ամիս է այստեղ կպաշտոնավարե: Հավատավոր, լուսամիտ և եռանդաշատ երիտասարդ հոգևորական մըն է, որ կսիրե աշխատիլ, գործել, որպեսզի հետզհետե ավելի զորանա այստեղի եկեղեցին և հոգևոր կյանքը այս համայնքեն ներս:

Իբրև հիշատակ Ս. Էջմիածնեն, նախ փոքրիկ նվեր մը կուզեմ մատուցել հայր սուրբին: Սուրբ պատարագի այս սուրբ սկիհը Էջմիածնի մեջ մեր արծաթագործներու ձեռքով պատրաստված է, որուն վրա կան խորհրդանիշերը

մեր հավատքին և մեր Մայր Աթոռին: Բարի վայելում, սիրելի հայր սուրբ: Իսկ Ձեզի անձնապես ձեռաց խաչ մը Էջմիածնեն, որպեսզի միշտ օրհնեք այս ժողովուրդը և հիշեք Ս. Էջմիածինը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ». ամեն:

Հավարտ ս. պատարագի, եկեղեցուն կից հայ նահատակաց հոշարձանի մոտ տեղի է ունենում հոգեհանգիստ «Վասն բիւրաւոր նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայաստան»:

Այնուհետև եկեղեցու վարչության ատենապետ պրն. Գիլավյանը իր ընտանեկան հյուրընկալ հարկի տակ ճաշկերույթով պատվում է Վեհափառ Հայրապետին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նույն օրը, ժամը 14-ին, Հայոց Հայրապետը քաղաքավարական այցելություն է տալիս Ուրուգվայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան Յուրի Լեբեդևին:

Նորին Սրբության և մեծարգո դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսները, Տ. Հակոբ վարդապետը, Տ. Ասողիկ աբեղան, ինչպես նաև եկեղեցական վարչության մի քանի ներկայացուցիչներ:

* * *

Նույն օրը, ժամը 15-ին, Նորին Սրբությանը իր հյուրընկալ տան մեջ ճաշով հյուրասիրում է ազգային իշխանության կենտրոնական վարչության նախագահ պրն. Կարապետ Փիլավճյանը:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, «Պարկե» հյուրանոցի ճաշասրահում ազգային իշխանության կենտրոնական վարչությունը և Ընդունելության Պատվո Հանձնախումբը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում են համազգային ճաշկերույթ:

Ճաշկերույթին ներկա էին՝ Տ. Ներսես եպս. Պոլատյանը, Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը, Տ. Հակոբ վրդ. Գլընճյանը, Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը, Մոնտեվիդեոյի ազգային իշխանության կենտրոնական վարչության և Ընդունելության Հանձնախմբի անդամները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պաշտոնական բարձրաստիճան հյուրեր և բազմաթիվ հրավիրյալներ՝ շուրջ 500 հոգի:

Հանուն ուրուգվահայ գաղութի, ողջույնի խոսքով հանդես է գալիս գաղութի հոգևոր հովիվ Տ. Հակոբ վրդ. Գլընճյանը:

«Վեհափառ Տեր,

Մեր սրբազան շարականագիրներեն մեկը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին

ակնարկելով, այն կբնութագրե որպես «Շտեմարան անսպառելի շնորհաց աստուածայնոյ»: Իսկապես ալ Ս. Էջմիածինը ավելի քան տասնվեց դարերե ի վեր անսպառելի շնորհներ բաշխած է ու կբաշխե ամբողջ հայ ժողովուրդին՝ ըլլալով կերտիչը անոր ոգեկան հկոր ուժին, կոր ոչ մեկ կործանարար հարձակում ի վիճակի եղած է խորտակելու: Ս. Էջմիածինը մեկի համար խորհուրդ մըն է, ավելին՝ ան հայ ժողովուրդի հոգեկան տոկունությունը կխորհրդանշե:

Շուրջ 130 լուսամիտ հայրապետներ, որպես անձնդիր հովվապետներ հայոց, հսկած են շարունակ, որպեսզի ոչ ոք թշնամաբար չփորձե նսեմացնել Ս. Էջմիածնի հմայքը հայ ժողովուրդի մեջ՝ պատճառ չդառնալու համար ազգային ոգիի և արժեքներու տկարացման:

Այսօր, ահավասիկ այդ սրբական հայրապետներու հույլեն մեր մեջ ունինք Ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռի այժմու լուսամիտ և առաքելատիպ Գահակալը՝ Ն. Ս. Օծություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը: Ան ելած է այցելելու մայր հայրենիքեն դուրս ապլող Իր հոտին՝ խրախուսելու ու հոգեպես մխիթարելու համար զայն այնպես, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոս 1600 տարիներ առաջ Իր ամբողջ փառքով ու զորությամբ այցելեց հայ ժողովուրդին՝ տալով անոր Ս. Էջմիածինը որպես ավանդ:

Վեհափառ Տեր, այժմ բոլորս Ձեզմով կզգանք մերձավորությունը մեր հայրենիքին ու մեր հավատքի կեդրոն Ս. Էջմիածնին: Ամրապնդեցեք մեր հոգիները Ձեր հայրաշունչ խոսքերով, օրհնեցեք բոլորս, որպեսզի անջնջելի մնան այս օրերու քաղցր տպավորությունները մեր հոգիներեն ներս ու փոխանցվին սերունդ-սերունդ:

Հանուն ուրուգվահայ թեմի կեդրոնական վարչության, թույլ տվեք բարի գալուստ մաղթել Ձեզ և համբուրել Ձեր սրբազան Աջը»:

Ուրուգվահայ թեմի ազգային կենտրոնական վարչության անունից Վեհափառ Հայրապետին ուղղված բարիգալստյան խոսք է ասում նաև վարչության նախագահ պրն. Կարապետ Փիլավճյանը:

Ճաշկերույթի ընթացքում սրտահույզ խոսքերով հանդես են գալիս Տ. Ներսես եպս. Պոզապալյանը և Տ. Նորվան եպս. Զաքարյանը: Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը հուզումով արտասանում է Հովհաննես Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» բանաստեղծությունը:

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

«Արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից»:

Այս բնաբանով սկսա ես իմ քարոզը եկեղեցիին մեջ, սուրբ պատարագի ընթացքին և հիշեցի պատմական այն իրողությունը, որ քրիստոնեությունը համայն Հռոմեական կայսրության տարածքի վրա հալածանքներ ապրեցավ և Աստուծո օգնականությամբ հաղթանակեց գրեթե ամեն տեղ: Այսպես եղավ նաև Հայաստանի մեջ, երբ հիմնվեցավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, իբրև ինքնուրույն ազգային Եկեղեցի և իր առաքելությունը շարունակեց դարերու մեջեն ու հասավ մինչև այսօր որպես ամենասուրբ ժառանգությունը մեր նախնյաց: Սակայն այսօր կուզեմ ավելցնել, թե մեր ազգի մարտիրոսությունը չվերջացավ քրիստոնեության հաղթանակով: Մեր դժբախտ ճակատագրի բերումով՝ այդ մարտիրոսությունը շարունակվեցավ պատմական Հայաստանի հողի վրա, և բազում անգամներ մեր ժողովուրդը իր կյանքի գնով հաճախ

պաշտպանեց իր հավատքը և իր ազատ ապրելու կամքը: Եվ այդ մարտիրոսության ամենաողբերգականը տեղի ունեցավ այն սև տարին, 1915-ին, երբ հայ ժողովուրդի կեսը նահատակվեցավ: Փրկվեցավ միայն Արևելյան Հայաստանը, փրկվեցավ մանավանդ Սարդարապատի ճակատամարտի հաղթանակով: Հիմնվեցավ հայկական նոր պետականությունը, որ կշարունակե իր գոյությունը պատմական բարենպաստ պայմաններու մեջ՝ զարգանալով տնտեսապես և ծաղկեցնելով իր ազգային մշակույթը: Եվ այսպիսով, ապահովության պայմաններու մեջ, այսօր մեր հայրենիքը կապրի նոր վերածնունդի և վերաշինության շրջան մը:

Այս հույժ նպաստավոր իրադրության մեջ բարեշրջումի նոր շրջան մը կապրի նաև մեր Մայր Եկեղեցին: Անոնք, որ Հայաստան այցելած են, անոնք, որ գտնված են Ս. Էջմիածին կամ այցելած են Երևանի եկեղեցիները, անշուշտ տեսած են հոգևոր կարթոնքի իրողությունը: Իսկապես, Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այսօր կազմակերպված հաստատություն մըն է ոչ միայն հոգևոր իմաստով, այլ նաև իր տնտեսական կառույցով, իր ներքին վարչական կազմակերպվածությամբ և իր առաքելությամբ հայրենիքի սահմաններեն ներս և ի սփյուռս աշխարհի: Սուրբ Էջմիածինը անկասկած այսօր կգտնվի իր պատմական առաքելության ուղիղ ճամփուն վրա:

Մեր Եկեղեցին նաև հեռու չի մնար համաքրիստոնեական կյանքեն՝ հատկապես գործոն կերպով մասնակցելով էկումենիկ շարժումին: Մեր Եկեղեցին, ավելի քան քսան տարիներե ի վեր, անդամ է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին և իր մնայուն ներկայացուցիչներն ունի Ժնևի կեդրոնական վարչության մեջ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նաև ուղղակի սիրալիր հարաբերություններ կմշակե քույր Եկեղեցիներու հետ: Առաջին հերթին օրթոդոքս Եկեղեցիներու հետ, Անգլիկան Եկեղեցվո հետ, Կաթողիկե Հռոմեական Եկեղեցվո և այլ Եկեղեցիներու հետ:

Այսպիսով, Հայաստանյայց Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, իր սիրտը բացած, կմոտենա քրիստոնեական քույր Եկեղեցիներուն այն համոզումով, որ ամրապնդվի համաշխարհային քիրստոնեական եղբայրությունը, և գլխավոր արտահայտություններեն մեկը դառնա աղոթքը վասն խաղաղության աշխարհի, որովհետև մենք՝ հոգևորականներս, կՔրիստոս դավանողներս, առանձնապես ոգեշնչված ենք խաղաղության և սիրո աստվածային պատգամներով և կուզենք, որ Եկեղեցիներու բեմերեն տարածվի շունչը Քրիստոսի խաղաղության: Խաղաղությունը կենսական է նաև մեր փոքրիկ ազգին համար, մեր Եկեղեցիին համար, մեր հայրենիքին համար, որ բազում փոթորիկներե հապիվ փրկվեցավ: Եվ մենք երբեք չպիտի կամենանք, որ նոր փորձություններու ենթարկվինք, նորեն ոտքի կոխան ըլլանք:

Սիրելի ժողովուրդ, ուրախ եմ հաստատելու, որ մեր հայրենիքեն ներս, մեր հոգևոր կյանքի կարթոնքին զուգընթաց, կզարգանա նաև արտասահմանի հայ համայնքներու հոգևոր մշակութային կյանքը:

Ես այցելեցի Բեյրութ 1956-ին և փառք տվի Աստուծույն, որ մեր հայ համայնքն այդ երկրին մեջ կապրի եկեղեցական ու մշակութային բարգավաճ կյանքով: Անշուշտ ցավ է բոլորիս համար, որ վերջին տասը տարվան ընթացքին ներքին փոթորկում մը այնքան դժբախտություն բերավ այնտեղ ապրող համայնքներուն: Իմ աղոթքն է առ Աստված, որ Լիբանանը հասնի խաղաղության և համերաշխության ափին, վերագտնե իր երբեմնի խաղաղությունը և միշտ մնա մարգարիտը Միջերկրականի:

Երջանիկ եմ, որ այս իրողությունը հաստատեցի այստեղ ևս ձեր համայնքեն ներս: Հաստատեցի, այո՛, ձեր եկեղեցական համայնքի բարեկարգ կյանքը: Դուք բոլորդ մեկ նպատակի կծառայեք՝ պահպանել Քրիստոսի լույս հավատքը և ձեր ազգային ինքնությունը՝ ձեր ավանդություններով, մայրենի լեզվով և մշակութային արժեքներով, միշտ հավատարիմ մնալով այս երկրին իբրև պարկեշտ քաղաքացիներ:

Կրկին անգամ կբերեմ բոլորիդ իմ մաղթանքները ձեր բոլոր հոգեշեն և ազգանվեր ծրագիրներու իրագործման համար:

Աղոթքի այս պահուն ես կողջունեմ նաև ներկայությունը Սովետական Միության դեսպանության հարգարժան ներկայացուցիչներուն, որոնք կպատվեն մեր աղոթքի այս Տունը և հայ համայնքը: Կխնդրեմ, որ իմ հարգալից ողջույնները փոխանցեն Նորին Գերազանցություն պարոն դեսպանին:

Ջերմ սիրով կողջունեմ այստեղ նաև ներկայությունը բոլրիս սիրելի Լիբանանի մեծարգո դեսպանին:

Կրկին անգամ իմ շնորհակալությունը եկեղեցվո վարչության և Ընդունելությանց Հանձնաժողովի բոլոր անդամներուն այս սքանչելի ճաշկերույթի համար: Թող բարին Աստված օրհնե բոլորդ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ «ՆՈՒՊԱՐՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 14-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Մոնտեվիդեոյի «Նուպարյան» վարժարան՝ ներկա լինելու Իր պատվին կազմակերպված հանդիսությանը:

Հանդիսության ժամանակ բարիգալստյան խոսքով հանդես է գալիս դպրոցի ուսուցչուհի տիկին Ակնիվ Գրաճյանը՝ նշելով.

«Վեհափառ Տեր,

Այսօր մեծ ուրախություն և բախտավորություն ունինք Հ. Բ. Ը. Միության այս պայծառ հարկին տակ ընդունելու Ձեզ՝ մեր օրերու Հայոց մեծաշնորհ Հայրապետը, որ Իր երրորդ շնորհաբեր այցելությունը կուտա Ուրուգվայի հայության: Տոնական անմոռանալի օրեր կապրին Հարավային Ամերիկայի հայկական բոլոր գաղթօջախները՝ իրենց մեջ ունենալով Լուսավորչի Աթոռի շնորհավարդ Գահակալը:

Վեհափառ Տեր, «Նուպարյան» վարժարանի տնօրենությունը և ուսուցչական կազմը, վարիչ հանձնախումբերով, նվիրյալ և անշահախնդիր ոգիով մը կջանան այս կրթական հաստատութենեն ներս իրենց առավելագույնը ընել՝ այս խոստումնալից հայորդիներուն տալու համար հայեցի դաստիարակություն: Մեր ամենիվ աշխատանքի մեջ մենք կներշնչենք Ձեր նվիրյալ և բեղուն կյանքի օրինակով՝ խոստանալով մեր կարելին ի գործ դնել այդ ոգին փոխանցելու համար նոր սերունդին, որպեսզի ամուր մնա սուրբ Մեսրոպի վառած ջահը որպես դարերեն եկող լուսավոր փարոս:

Մենք՝ այս հաստատության պաշտոնյաներս, մեծապես կգնահատենք Հայկական Բարեգործական Միության նախախնամական դերը այս հյուրընկալ երկիրներուն մեջ ապրող հայության համար՝ կրթական, բարեսիրական, մշակութային ասպարեզներու մեջ:

Այս պահուս բոլորս միասին կհայցենք երկնային Հորմեն ավելի և ավելի լույս այս կրթական օջախի պայծառության և բարգավաճման համար:

Վեհափառ Տեր, Ձեր սրբազան ներկայության անգամ մը ևս կխոստանանք

պատվով կատարել հայ ուսուցչի ու դաստիարակի մեր վեհ առաքելությունը՝ պարտոր մեջ տեսնելով մեր մատաղ սերունդի ապագա փառքի և մեծության գրավականը:

Շնորհակալություն Ձեր ավետաբեր այցելության համար:

Հարգանք բազմադարյան Սուրբ Էջմիածնա Աթոռին»:

Այնուհետև գեղարվեստական ճոխ ծրագրով հանդես են գալիս վարժարանի աշակերտներն ու աշակերտուհիները՝ կատարելով ազգային-հայրենասիրական երգեր և արտասանելով հայ բանաստեղծների քերթվածներ:

Հանդիսության ավարտին Իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ՆՈՒՊԱՐՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Շատ ուրախ եմ, որ կրկին կգտնվիմ Մոնտեվիդեոյի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հարկի տակ: Երջանիկ եմ իմ ողջույնը բերելու մայր հայրենիքեն և իմ օրհնությունը Ս. Էջմիածնեն ձեզի բոլորիդ, որ այս մեծ Միության հովանիին ներքև կազմակերպված կյանք ստեղծած եք ձեր կրթական հաստատությամբ՝ դաստիարակելու համար մեր նոր սերունդները հայկական շունչով, ազգային-հայրենասիրական ոգիով:

Ես երեկ այցելեցի ձեր շենքերու մեկ մասը և դասարանները, բայց այս պահուն, երբ կգտնվիմ ձեր առջև, սիրելի աշակերտներ և աշակերտուհիներ, կմտածեմ, որ այս փառավոր շենքերուն շունչ տվողը դուք եք, այլապես այս շենքերը ինչքան ալ շքեղ ըլլային, առանց ձեզի անոնք պիտի մնային անկենդան: Ես, իբրև Հայոց Հայրապետ, առավելագույն չափով կգնահատեմ բոլոր կրթական հաստատությունները, որոնք կգործեն հայ սփյուռքի ծարածքի վրա:

Եկած եմ, սիրելի աշակերտներ, այսօր հատկապես բերելու ձեզի իմ օրհնությունը և իմ խոսքը: Հսկայքով լեցի քայլերգը Արտիգասի հիշատակին նվիրված, քայլերգը Ուրուգվայի Հանրապետության, որու քաղաքացիներն եք դուք: Շատ համեցա այս քայլերգը, որ երախտագիտության խոսք մըն է՝ ուղղված Արտիգասին, հիմնադիրը այս երկրին, ապատարարը այս հայրենիքին: Այդ քայլերգին մեջ Արտիգաս և ապատության գաղափարները կնույնանան: Ապատության, յանախոհության, մարդասիրության այդ գաղափարներու շնորհիվ է, որ դուք՝ հայերդ, այստեղ կազմած եք ձեր եկեղեցական համայնքը, կառուցած եք ձեր սուրբ եկեղեցին, հիմնած եք ձեր կրթական հաստատությունները և մշակութային միությունները: Իմ առաջին պատգամն է, որ արժանի կերպով գնահատեք այդ ապատությունները, զորս կվայելեք այստեղ, և մնալով բարի քաղաքացիները այս երկրին՝ մնաք նաև հավատարիմ զավակները մեր Եկեղեցիին և մեր մայր հայրենիքին:

Ես գիտեմ, որ դուք այս կրթական հարկի տակ կսորվիք նախ կաստերեն լեզուն, որ շատ երաժշտական կինչե իմ ականջներուն: Լավ սորվեցեք այս գեղեցիկ լեզուն և հարստացուցեք ձեր միտքն ու հոգին այն բոլոր արվեստի գործերով, որոնք գրված են այդ լեզվով: Սպաներեն լեզուն լատինական լեզուներու շարքին ամենագեղեցիկներեն մեկն է: Դուք գիտեք, որ հնդեվրոպական լեզուներու ընտանիքը բազմաթիվ ճյուղավորումներ ունի: Լատիներենը այդ գլխավոր ճյուղերեն մեկն է: Անկե սերած են բոլոր լատինական լեզուները, ինչպիսիք են՝ ֆրանսերենը, իտալերենը, սպաներենը և այլն: Բայց կան նաև ուրիշ հնդեվրոպական բարձրարժեք լեզուներ, ինչպես՝ հունարենը, գեր-

մանական լեզուները, սլավոնական լեզուները և այլն: Այդ հնդեվրոպական լեզուներու ընտանիքին մեկ ճյուղը կկազմե նաև մեր մայրենի լեզուն, հայերեն լեզուն, որ ազգական լեզու է սպաներենին իր խորունկ արմատներով: Հայերեն լեզուն աշխարհի գեղեցիկ և ամենակատարյալ լեզուներեն մեկն է: Շատ օտար գիտնականներ հատուկ հայերեն լեզու կսորվին, որպեսզի ամբողջացնեն իրենց գիտելիքները հնդեվրոպական լեզուներու վերաբերյալ: Եվ գիտեք, հայերեն լեզվի կատարելության ամենապայծառ ապացույցը այն է, որ տակավին Ե դարու սկզբին հայերեն լեզվով Ս. Մեսրոպ և Ս. Սահակ կարողացան Սուրբ Գիրքը թարգմանել: Այն լեզուները, որոնց միջոցով կատարյալ կերպով կարելի է Սուրբ Գիրքը թարգմանել, այդ լեզուները կատարյալ լեզուներ կհամարվին: Եվ հայերեն լեզուն այդպիսի լեզու եղած է տակավին Ե դարեն սկսյալ: Հետևաբար, սիրելի աշակերտներ, ես կուզամ ձեզի այս պատգամը բերելու, որ սորվիք, լավ սորվիք մեր մայրենի լեզուն, հայերեն լեզուն, մեր այսօրվա Հայաստանի լեզուն, ձեր հայաստանցի եղբայրներու և քույրերու լեզուն կամ՝ ինչպես բանաստեղծը կըսե՝ «Հերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն»:

Կշնորհավորեմ այս վարժարանի հիմնադիրները, կազմակերպիչները, տնօրենությունը և դասախոսական կազմը: Կմաղթեմ ձեզի ուժ, եռանդ, անընպառ ոգեշնչում, որպեսզի դուք կարողանաք այստեղ հասցնել սերունդներ, որոնք հայերեն գիտնան կարդալ, խոսիլ և հետևաբար հայերեն մտածել, զգալ: Առանց հայերեն լեզվի, դժվար թե երիտասարդ մը հայու պես մտածե և մանավանդ հայու պես զգա: Լեզուն պարզապես մեքենական միջոց մը չէ հաղորդակցության: Մայրենի լեզուն ժողովուրդի մը հոգվո պատկերն է: Ահա այս պատգամը կուզեմ բերել ձեզի, ինչպես նաև բոլոր այն վարժարաններուն, որոնք կգործեն սփյուռքի տարածքի վրա:

Իմ օրհնությունը այս կրթական հաստատության և ձեզի, սիրելի աշակերտներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՆԵՐՍԵՍՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առնելով «Նուպարյան» վարժարանի սաներից և ուսուցիչներից, այցելում է Մոնտեվիդեոյի «Ներսեսյան» վարժարան և կատարում նորակառույց մանկապարտեզի բացումը:

Այդ առթիվ բացման խոսքով հանդես է գալիս ուսուցչուհի տիկին Զապել Գեթսամանյանը:

«Վեհափառ Տեր,

Հոգեկան մեծ հրճվանքով հավաքված ենք այսօր «Ներսեսյան» կրթական հաստատությանս հարկին տակ և պատիվը ունինք ընդունելու բոլորիս շատ սիրելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Իբրև համեստ մեկ ներկայացուցիչը կրթական այս տաճարին, կողջունեմ Ձեր ներկայությունը և բարի գալուստ կմաղթեմ Ձեզի հաստատությանս տնօրենության և ուսուցչական կազմին անունով:

Գաղութիս հայապահպանման և ազգային գոյատևման ամրոցներեն մեկն է «Ներսեսյան» այս վարժարանը, որուն հիմը դրված է երկար տարիներ առաջ կարգ մը ազգայիններու կողմե ու կանգուն կմնա մինչև օրս ի գին մեծ զոհողությանց:

Այսօր կիրականանա մեր փափագը. Ձերդ Սրբության ձեռքով կկատարվի

հանդիսավոր բացումը հարմարություններով օժտված հայկական մանկապարտեզի մը:

Վեհափառ Տեր, այստեղ մեր վարժարանի Լաներուն, տեղական պետական ծրագրի կողքին, կջամբենք հայեցի դաստիարակություն՝ դասավանդելով հայ լեզուն, հայոց պատմությունն ու մշակույթը: Սրտի գոհունակությամբ կրնանք ըսել, թե վերջին տասներկու տարիներու ընթացքին հասցուցած ենք հայախոս, հայրենասեր և իր ազգային պարտականությանը գիտակից սերունդ մը՝ մոտ 60 ավարտականներ, որոնց մեկ մասը արդեն նվիրված է ազգային և ընկերային գործունեության. օրինակ՝ մեր ուսուցչական կազմեն և ուսուցչական խորհուրդեն շատեր մեր դպրոցի նախկին շրջանավարտ սաներն են:

Օտար ափերու վրա, հայրենի հողի կորութենեն կտրված ազգ մը կտկտրանա, որովհետև անոր կյանքի անհրաժեշտ սնունդը, ինչպես Արշակ Բ թագավորի պարագան: Այստեղ մասամբ հայ դպրոցն է, որ կկգացնե մեր մանուկներուն հայրենի հողի հարազատությունն ու կորությունը: Իբրև կրթական մշակներ, կդիմենք Ձերդ Սրբության, որ Ձեր հայրական օրհնության հետ նաև հացնեք մեզի Ձեր բարոյական օգնությունը՝ հաստատելու և ամրացնելու մշակութային կապը հայրենիքի և մեր գաղութի միջև, որպեսզի հայրենիքը հաճախակի թարմ ավիշ ներարկե մեր նոր սերունդներու հոգիներեն ներս և հոգեպես կորացնե վանոնք»:

Այնուհետև վարժարանի սաների կողմից գործադրության է դրվում գեղարվեստական մի ճոխ ծրագիր:

Վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ՆԵՐՍԵՍՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Բարեգործականի «Նուպարյան» վարժարանեն գայով այստեղ, նոր ուրախություն կապրիմ և նոր ոգևորություն, որովհետև այս նույնպես ազգային կրթական հաստատություն մըն է, «Ներսեսյան» այս վարժարանը, որ իմ սրտին մոտ է, ինչպես ամեն հայկական դպրոց:

Կբերեմ ձեզի բոլորիդ և այս վարժարանի հոգաբարձության, տնօրենության, կրթական մշակներուն և այս սիրասուն աշակերտներուն Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն և ամենաբարի մաղթանքներ իմ սրտեն բխած, որ այս հաստատությունը գոյատևե, զորանա, ամրանա, իր աշակերտության թիվը հետզհետե ավելցնե և քայլ առ քայլ հառաջդիմելով՝ իր նպատակները իրագործե, ի մխիթարություն բոլորիդ և ի մխիթարություն ինձ:

Ես այս վարժարանը ալցելած եմ նաև իմ նախորդ ուղևորությանց առիթով: Այս գեղեցիկ նորակառույց շենքերը չկային այն ատեն, մեկ վարժարան կար: Այսօր երկու վարժարան ունիք որոշ կացություններու հետևանքով: Ես մեկ բաղձանք ունիմ, որ օր մը այս երկու վարժարաններու միջև դուռը բացվի, և մեկ միասնական, ամբողջական հայկական վարժարան գործե, համերաշխ մթնոլորտի մեջ:

Ես մասնավոր տկարություն մը ունիմ մանկապարտեզի նկատմամբ և ինձի հոգեկան առանձին գոհունակություն պատճառեց, որ մանկապարտեզի բացումը ես կատարեցի ու լսեցի այս փոքրիկներու երգերը: Մանավանդ ես հուզվեցա այս սիրուն երեխաներու հրեշտակային երգերեն: Գիտեք, որ ես երկար տարիներ, հոգևորական կոչում ստանալե առաջ, ուսուցիչ եղած եմ Բուխարեստ, ուր մենք հայաշունչ գաղութ մը ունեինք ավելի քան տասը հազար հայերով և

շուրջ չորս հարյուր աշակերտներով և մանկապարտեզով: Մանկապարտեզը իմ ամենասիրած վայրն էր, ուր հաճախ կայցելեի ապատ եղած ժամանակ և հոգեպես կհրճվեի փոքրիկներու ներկայութենեն և անոնց անմեղ ժպիտներեն: Այս պահուս ես հիշեցի անցյալի իմ այս ուրախ փորձառությունը:

Ուրախ սրտով ձեզի կբաշխեմ իմ հայրական սերը և իմ օրհնությունը:

*
* *

Ժամը 17.30-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով, ուղեկցությամբ ազգային կենտրոնական վարչության անդամների, այցելում է Ուրուգվայի ազգային հերոս կորավոր Արտիգասի հուշարձանին և ծաղկեպսակ լետեղում այնտեղ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏԻՆ

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ուրուգվայի Հանրապետության պրեզիդենտ Գրեգորիու Ալվարեսին: Հայոց Հայրապետի և մեծարգո պրեզիդենտի միջև տեղի է ունենում զրույց: Նորին Սրբությունը աղոթում է Ուրուգվայի ժողովրդի խաղաղության, բարգավաճման և երջանկության համար: Հարգելի պրեզիդենտը ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի ներկայությունը Ուրուգվայի հողի վրա և ցանկանում ամենայն հաջողություններ:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ավելի ուշ, երեկոյան ժամը 21-ին, Մոնտեվիդեոյի ազգային կենտրոնական վարչությունը կազմակերպում է գրական-գեղարվեստական երեկո՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Երեկոյին ներկա էին շուրջ 1000 հրավիրյալներ:

Երեկոյի ընթացքում գրական-գեղարվեստական ձևավորումով, լուսապատկերների ցուցադրմամբ ներկայացվում է Գևորգ Էմինի «Հավերժի ճամփորդը» պոեմը: